ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը յուլիս 11-ին կրկին մի անգամ ուղեւորութիւն յանձն առաւ դէպի Սեւանի վանքը, Երեւանի վրայով, ուղեկցութեամբ Բարձր. Գարեգին վարդապետ Սաթունեանի։ Այդտեղ Նորին Վեհափառութեան շքախմբին միացաւ Երեւանի Թեմ. Փոխանորդ Գեր. Ներսէս արքեպիսկոպոսն, որ Նոր Բայազիդ էր ուղեւորուել քահանաների և ժողովրդականների մէջ ծագած ինչ ինչ անբաւականութեանց վերջ տալու համար, և ուղեկցեց Վեհափառ Հայրապետին մինչև Հաղարծնի վանքը և վերադարձին։ Մայր Աթոռ վերադարձաւ Նորին Սրբութիւնը յուլիս 20-ին։ Ապա 24-ին Բիւրականի ամարանոցը գնաց մի քանի օր ազատ մնալու համար ս. Էջմիածնի տօթերից։ Իսկ օգոստոս 8-ին Նորին Վեհափառութիւնն ուղեկից ունենալով Գեր. Ներսէս արքեպիսկոպոսին և Բարձր. Գարեգին վարդապետ Սաթունեանին և Դիւանապետ Տ. Կորիւն վարդապետին մեկնեցաւ ձիով դէպի Հառիճի վանքը։—Ախալցխայի փոխանորդ Արժ. Պետրոս և Աղէքսանդրապոլի փոխանորդ Արժ. Մխիթար վարդապետներին հեռագրուեցաւ, որ շտապին Հառիճ երթալ՝ Նորին Ս. Օծութեան ներկայանալու։

Վեհափառ Հայրապետի սրբ. Կոնդակով Շողակաթի վանքի վանահայր նշանակուեցաւ Արժ. Սահակ վարդապետ Ամատունի. Գորւոյ Փոխանորդ կարգուեցաւ և ծայրեայ սև փիլոնով պարգևատրուեցաւ Արժ. Իսահակ վարդապետ Տէր Միքայէլեան. Շատինեաց վանքի վանահայր կարգուեցաւ Բարեշնորհ Եփրեմ աբեղայ Ազատեանց և Խոր վիրապի վանքի վանահայր՝ Բարեշն. Թադէոս աբեղայ։ Վարդապետական ականակուռ խաչ ստացաւ Արժ. Արսէն վարդ. Ղլտճեանց, որ նշանակուած է առ ժամանակ Վաղարշապատ գիւղից վանքին հասանելիք կալուածները ժողովելու գործին վերահսկող և ամենայն աչալրջութեամբ կատարում է այդ պաշտօնը։

Սինոդի անդամ Բարձր. Յուսիկ վարդապետ վերադարձաւ Արտաթումանից և փոխարէն օգոստոս 5-ին դէպի Տփխիս մեկնեցաւ հանքային ջրերով ապաքինելու նոյն Սինոդի անդամ Գեր. Եսայի արքեպիսկոպոս։

Յուլիս 19-ին Մայր Աթոռ հիւր եկաւ Ս. Պետերբուրգի Կայսերական համալսարանի արևելեան բաժնի ուսուցչապետ պ. Մառ և զբաղուում է ձեռագիրների մատենադարանում։ Պ. Մառ համեմատում և հետազօտում է մի քանի սրբոց վկայաբանութիւններ, որոնց վրացերէն թարգմանութիւնների հայերէնից փոխադրուած լինելը պէտք է ապացուցանէ։ Մեծարգոյ ուսուցչապետը մտադիր է ամսոյս 16-ին երթալ մի քանի օրով պեղումներ անելու այն բլուրի վերայ, ուր պէտք է ենթադրել թէ գտնուում էր հին Դուինի մայրաքաղաքը։ Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ առաջիկայ սեպտեմբեր ամսից Պետերբուրգ պէտք է փոխադրուի և պ. Մառի հսկողութեան ներքոյ շարունակէ իւր ուսումը Շնորհ. Սմբատ սարկաւագ։

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Առաջիկայ ուսումնական տարուանից սկսած Ճեմարանը պէտք է ունենայ կրկին Ա. և Բ. դասատուններ, որ պէտք է կազմեն անցեալ տարուայ վարժոցի Դ. և Ե. բաժանմունքները։ Վարժոց ուրեմն Ճեմարանն այսուհետև չի ունենայ և նորա ամենաստորին դասարանը կլինի Առաջինը, նախկին ծխական դպրոցների Ե. բաժանմունք կամ մեր թեմական դպրանոցների Բ. դասատուն ծրագրով։ Ուսանողների վարժոցում ունեցած պարապմունքների բարձուելով ի միջի այլոց հնարաւորութիւն է լինում մի նոր շատ կարևոր առարկայ մտցնել լսարաններում՝ Եկեղ. իրաւագիտութիւն, որի համար ուսուցիչ հրաւիրուած է արդէն Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական բաժնի նորաւարտ կանդիդատ պ. Սիրական Տիգրանեան։

Ճեմարանը ներկայումս ունի արդէն իւր